

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԺԱՆՆԱ

ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ

2



ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 2

Մեթոդական ուղեցույց



Ավետիսյան Ժաննա

Տեխնոլոգիա 2 (Մեթոդական ուղեցույց) / Ժ. Ավետիսյան, Եր.,
Էդիթ Պրինտ, 2023, 60 էջ:

© Ժ. Ավետիսյան

© Էդիթ Պրինտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մեթոդական ուղեցուցիչի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ	4
ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	4

ԲԱԺԻՆ 1.

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ	
ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	10
ԹԵՄԱ: ՆՅՈՒԹԵՐ և ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	11
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	15
ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	19

ԲԱԺԻՆ 2.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ	
ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ	37
ԴԱՍ 1	41
ԴԱՍ 2.	44
ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ, ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ	48
ԳՆԱՀԱՏՈՒՄ	50
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ	54
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	58

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Մեթոդական ուղեցույցը նախատեսված է երկրորդ դասարանի «Տեխնոլոգիա» առարկայի ծրագրային բաժինների, թեմաների, դասագրքի կառուցվածքի, բովանդակության, դասանյութի յուրացման և առաջադրանքների կատարման խնդիրները պարզաբանելու համար:

Ուղեցույցի նպատակն է օգնել ուսուցիչներին մեթոդապես ճիշտ կազմակերպելու դասագրքում տեղ գտած ծրագրային թեմաների դասավանդման գործընթացը, սովորողներին հնարավորություն ընձեռել յուրացնելու գիտելիքների, հմտությունների այն ծավալը, որ նախատեսված է ծրագրային բովանդակությամբ և վերջնարդյունքներով:

ԴԱՍԱԳՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Երկրորդ դասարանի դասագրքի բովանդակությունը կազմված է ծրագրային և չափորոշչային պահանջներին համապատասխան, որտեղ կարևորվում են սովորողների տարիքային առանձնահատկությունները, նախնական տեսական գիտելիքները, կարողունակությունները և հմտությունները: Դասագրքում տեղ գտած առաջադրանքները պարտադրող չեն, այլ այլընտրանք են, հետևաբար դրանք առաջարկվում են սովորողին ծրագրային խնդիրներն իրականացնելու նպատակով: Սովորողը պետք է աշխատի իր հնարավորություններին համապատասխան տարբերակով, օգտվի պայմանական նշաններից, անհրաժեշտության դեպքում ուսուցիչը կարող է օգնել, ուղղորդել:

Երկրորդ դասարանում ծրագրով առաջարկվում են հետևյալ թեմաները՝

- «Գործիքներ և սարքավորումներ» բաժնում ներկայացվում են աշխատանքային միջոցների, գործիքների, սարքավորումների տեսակները, կիրառման ձևերը, դրանցից օգտվելու անվտանգության կանոնները:
- «Նյութեր և ռեսուրսներ» բաժինը ծանոթացնում է ձեռքով մշակվող նյութերի՝ թղթի, ստվարաթղթի, բնական և արհեստական նյութերի տեսակների, հասկությունների հետ՝ որպես աշխատանքային ռեսուրսներ:
- «Նյութերի մշակում» բաժնի բովանդակային հիմքը նյութը ձեռքով մշակելու՝ պատռման, կտրման, ծալման և տարբեր տեխնիկաների՝ ապլիկացիայի, խճանկարի, օրիգամիի, կոլաժի կիրառմամբ պարզագույն նմուշներ պատրաստելու սկզբնական գիտելիքներն են:
- «Ձեռնարկատիրություն» բաժինը ձեռնարկատիրական գործունեության ուսումնասիրման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման կարևորության, ձեռնարկատեր, ձեռներեցություն և ձեռնարկատիրություն հասկացությունների իմացության մասին է: Բաժինը նախատեսում է կազմակերպել գրույց «Ձեռներեցությունը որպես վարձու աշխատանքի գրավիչ և օրինական այլընտրանք» թեմայով:
- «Կենցաղ և ընտանիք» բաժնի նպատակն է ընդլայնել երեխայի պատկերացումները ինքնասպասարկման՝ անձնական հիգիենայի, հագուստի և կոշիկի խնամքի, մաքրության և պահպանման մասին: Դասը կարելի է կազմակերպել դասագրքում տրված նկարների օգնությամբ:
- «Առողջ սնունդ, սննդի պատրաստում» բաժնում ծրագիրն առաջարկում է թեմատիկ նկարների օգնությամբ ծանոթացնել սննդի ոլորտում աշխատող տարբեր մասնագիտությունների և մասնագետների՝ խոհարարի, մատուցողի, սպասարկողի, հացթուփի, վաճառողի գործառույթներին, ինչպես նաև սննդամթերքի տեսակներին՝ մրգերին, բան-

ջարեղենին, դրանց նկատմամբ ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջներին և առողջ սննդակարգին:

- «Դիզայն և կիրառական արվեստ» բաժնի նպատակն է երեխաներին ծանոթացնել իրենց շրջապատում գտնվող նախշազարդված դեկորատիվ կիրառական իրերի և առարկաների գեղեցիկ զարդապատկերների հետ, որպեսզի կարողանան տեսնել շրջապատում գտնվող գեղեցիկ առարկաները, զգալ, գնահատել, պահպանել գեղեցիկը և ստեղծել իրենց տարբերակը:
- Ընտրովի դասեր: Այս բաժնում երեխաները կարող են աշխատել նախընտրած նյութերով և տեխնիկայով:

Դասանյութերում պահպանված են միջառարկայական կապերը:

Ծրագրային թեմաները ինտեգրված են և գործունեության տարբեր ձևերի միջոցով պետք է ապահովեն սովորողների ստեղծագործական զարգացումը, լուծեն կրթադաստիարակչական խնդիրներ:

Դասագրքում գրեթե բոլոր դասերը կառուցված են ուսուցման սկզբունքով՝ պարզից-բարդ, հեշտից-դժվար, հասանելի, մատչելի, պահպանված է դասի ԽԻԿ համակարգի կառուցվածքը: Այսպես՝

- **Խթանման փուլում** երեխաներին ուսուցման գործընթացին ներգրավելու համար առաջարկվում են թեմայի բովանդակությանը համապատասխան նկարներ, որոնք պետք է ուղեկցվեն զրույցով, քննարկումներով, հարցերով: Այնուհետև ընթերցվում է հանելուկ կամ ոտանավոր:
- **Իմաստի ընկալում փուլում** տրվում է աշխատանքային նյութերի նախապատրաստման աշխատանքների հրահանգը, որտեղ հստակ ցուցված են այն բոլոր նյութերը և

միջոցները, որոնք անհրաժեշտ են տվյալ դասի համար: Հստակ, պատկերավոր և մանրամասնորեն նկարագրվում է գործնական աշխատանքների կատարման հաջորդականությունը: Այստեղ քայլ առ քայլ բացատրվում է նմուշի պատրաստման հաջորդականության ընթացքը, որն ուղղորդվում է սխեմաներով, նկարներով:

- **Կշռադատման փուլում** առաջարկվում է աշխատանքները ցուցադրել համապատասխան ցուցապաստառին, ապա խմբում քննարկել, առաջադրել հարցեր, զուգորդել, համադրել, համեմատություններ անել, համագործակցել, կիրառել:

Դասերի կազմակերպման համար առկա են ընդհանուր ցուցումներ.

- Դասը սկսել դիտումներով, ընթերցումով (զրույց, հանելուկ, ոտանավոր):
- Խթանել երևակայական և ստեղծագործական մտածողությունը:
- Դասի ընթացքում կազմակերպել ֆիզկուլտ դադար (հրանի, մատների, դաստակի վարժանքներ):
- Աշխատել առաջադրանքներում ցուցված սխեմաներով, նկարներով, պայմանական նշաններով:
- Կազմակերպել խմբային աշխատանքներ և քննարկումներ՝ վերլուծել, համեմատել, զուգորդել:

ՀԱՐԳԵԼԻ ՌԻՍՈՒՑԻՉ

Հեղինակային խումբը մշակել և ներկայացնում է դասագրքին կից աշխատանքային ալբոմ, այն ներառում է դասագրքի յուրաքանչյուր դասի առաջադրանքները, որոնք ուղեկցվում են գունապատկերներով և զծապատկերներով: Ալբոմն ունի ուսուցողական և ճանաչողական նշանակություն: Առաջադրանքների նպատակն է զարգացնել ուշադրությունը, դիտողականությունը, զննողականությունը, արագ կողմնորոշվելու ունակությունը, աշխատանքային կարողությունները, հմտությունները, ստեղծագործական մտածողությունը, գեղագիտական ճաշակը:

«Աշխատանքային ալբոմում» ներկայացված են գործնական առաջադրանքներ: Որպես կանոն յուրաքանչյուր դասի համար նախատեսված է մեկ առաջադրանք, սակայն անհրաժեշտության դեպքում այն կարելի է փոխել՝ դրսևորելով ստեղծագործական մոտեցումներ: Առաջադրանքների կառուցվածքը տարբեր է: Առաջադրանքի էջը կազմված է 2 մասից, էջի ձախ մասը ենթադրում է առաջադրանքի կատարման հանձնարարականներ, իսկ նույն էջի աջ մասում տրված են օժանդակող անհրաժեշտ գունավոր թղթեր, որոնք պետք է պատռել, կտրել և սոսնձել՝ տվյալ առաջադրանքը կատարելու համար:

Առաջադրանքներն ունեն երեք ուղղվածություն՝

- ապահովել երեխայի ակտիվ շփումը նյութերի հետ,
- սովորեցնել կատարել նույնանման և ստեղծագործական աշխատանքներ,
- նպաստել ձեռքի հմտության զարգացմանը:

Առաջադրանքների ստորին մասում ներկայացված են 5 աստղիկներ, որոնք աշակերտը կարող է գունավորել՝ իրականացնելով ինքնագնահատում՝

- ❖ ինքնուրույն աշխատանքի համար,
- ❖ կոկիկ աշխատելու համար,
- ❖ կոկիկ սոսնձելու համար,
- ❖ գծապատկերով ճիշտ աշխատելու համար,
- ❖ աշխատանքը ավարտելու համար:

ՀԱՐԳԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Աշխատանքային կարողությունները հմտության հասցնելու նպատակով՝ սովորողը դասագրքի նմուշօրինակներն իր նախաձեռնությամբ կարող է տանը պատրաստել՝ կրկնելով նույնը կամ սեփական մտաիղացմամբ: Պատրաստած նմուշները կարող է կիրառել դերային խաղերի, սեղանի թատրոնի ներկայացման մեջ, առաջադրել մաթեմատիկական խնդիրներ, հորինել հանելուկներ, հետաքրքրաշարժ հեքիաթներ, պատմվածքներ, խաղալ ինտերակտիվ խաղեր, համագործակցել:

ԲԱԺԻՆ 1.

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երկրորդ դասարանում «Տեխնոլոգիա» առարկայի բովանդակային հիմքը նյութը ձեռքով մշակելու և պարզագույն նմուշներ պատրաստելու սկզբնական գիտելիքներն են: Սովորողները պետք է ծանոթանան աշխատանքային նյութերին, դրանց տեսակներին, հատկություններին, մշակման առանձնահատկություններին, ինչպես նաև աշխատանքային միջոցներին, գործիքներին, սարքավորումներին, հարմարանքներին, ձեռքով մշակելու մատչելի ձևերին, դրանցից օգտվելու անվտանգության կանոններին: Անհրաժեշտ է, որ իմանան թղթից, բնական և արհեստական նյութերից օգտվելու արդյունավետ ձևերը, տեխնիկատեխնոլոգիական մշակման տեսակները, սովորեն գործնականում կիրառելի ձեռք բերած գիտելիքները:

Յուրաքանչյուր ծրագրային բաժին, որպես առանձին բովանդակային միավոր, աշխատանքների տեսակի տեխնոլոգիական մշակման գործընթաց է՝ ուղղված ուսուցման նպատակների իրականացմանը:

Ստորև ներկայացնում ենք «ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ» թեմայի պլանավորման նմուշօրինակ:

ԹԵՄԱ

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Նպատակը՝

- Իմանա մեզ շրջապատող նյութերի, դրանց հատկությունների, կիրառության մասին:
- Կարողանա նյութերն ըստ տեսակների տարբերակել, շինվածքին համապատասխան նյութ ընտրել:

Վերջնարդյունքները՝

- **Իմանա և տարբերի** բնական և արհեստական նյութերը, թղթի տեսակները, հատկությունները:
- **Թվարկի** կիրառության բնագավառները:
- **Նկարագրի** բնական և արհեստական նյութերի նախապատրաստումը աշխատանքի համար՝ հավաքի, ընտրի, որակավորի, մաքրի, չորացնի:
- **Կիրառի** նյութերը ըստ նշանակության:
- **Որոշի և ընտրի** ապլիկացիայի, խճանկարի, օրիգամիի տեխնիկայով աշխատանքների համար համապատասխան նյութերը:
- **Պահպանի** սանիտարահիգիենիկ և անվտանգության կանոնները:

Ծրագրով նախատեսված նպատակը և վերջնարդյունքները պետք է իրականացնել դասաժամերին:

Ուսուցման միջոցները՝

Դասագիրք, աշխատանքային այբոմ, աշխատանքային միջոց-

ներ, պարագաներ, գործիքներ, թղթի տեսակներ, բնական և արհեստական նյութեր, նմուշօրինակներ, պատկերազարդ նկարներ, սահիկներ, պաստառներ, համացանց:

Ուսուցման մեթոդները՝

Խոսքային՝ բացատրում, ցուցադրում, ցուցումներ, հրահանգներ, զրույց, պատմում, ընթերցում, գործնական աշխատանք՝ փորձեր, դիտումներ:

Մեթոդական ցուցումներ՝

- Դասերը կարելի է սկսել զրույցով, պատմումով, ընթերցումով, հարցադրումներով:
- Հարց՝ «Ի՞նչ գիտեք բնական և արհեստական նյութերի մասին»: Ստանալով տարբեր պատասխաններ, ուսուցիչը առաջարկում է անհատական, զույգերով կամ խմբով ներկայացնել թվարկած նյութերը՝ խմբավորելով ըստ տեսակների:

Ջրույց

- Բնական և արհեստական նյութերի տեսակների, հատկությունների և կիրառության մասին,
- թղթի տեսակների, հատկությունների, կիրառության բնագավառների մասին:

Բացադրել

Թուղթը, բնական և արհեստական նյութերը աշխատանքի համար նախապատրաստելու ձևերը՝ հավաքում, ընտրում, տեսակավորում, որակավորում, մաքրում, չորացում, պահեստավորում:

Ցուցադրել

- Թղթից պատրաստված նմուշներ՝ ապլիկացիա, օրիգամի, խճանկար:
- Բնական և արհեստական նյութերից պատրաստված ապլիկացիայի, խճանկարի նմուշներ:

Գործնական աշխատանք՝

Էքսկուրսիա

Սովորողների պատկերացումները զարգացնելու նպատակով կատարել էքսկուրսիա դեպի մոտակա պուրակ: Հավաքել բնական նյութեր, տեսակավորել, մաքրել, չորացնել, պահեստավորել:

Պարզագույն փորձեր, դիփումներ՝

- **Ջննել, ուսումնասիրել** թուղթը, բնական և արհեստական նյութերը՝ շոշափել, այրել, ճմռթել, ձգել, հանգուցել:
- **Որոշել** թղթի, բնական և արհեստական նյութերի հատկությունները, նմանությունները և տարբերությունը:

Հիշիր՝

Եթե դասարանում կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, նրանք պետք է մշտապես լինեն ուշադրության կենտրոնում, և առաջադրանքները լինեն առավել պարզ ու հասանելի:

Եզրույթներ, հասկացություններ

Հավաքում, ընտրում, տեսակավորում, որակավորում, մաքրում, չորացում, պահեստավորում:

Լրացուցիչ նյութեր՝

Ծանոթանալ տարբեր տեխնիկաների կիրառմամբ թղթից, բնական և արհեստական նյութերից պատրաստված ապլիկացիայի, օրիգամիի, խճանկարի նմուշներին:

Առաջադրանք՝

Աշխատանք ավրոմում:

Աշխատել ստեղծագործաբար:

Խմբային աշխատանք: Դասի ավարտին դիտարկել աշխատանքային նյութերը և կազմակերպել **քննարկումներ՝ զուգորդել, վերլուծել, համադրել:**

Միջառարկայական կապեր՝

- **Մայրենի**

Ընթերցել հանելուկներ, ոտանավորներ: Գրագետ պատասխանել հարցերին, նկարագրել նյութերը, դրանց տեսակները, կիրառության բնագավառները, ճիշտ մեկնաբանել գործընթացը: Օգտագործել եզրույթներ:

- **Մաթեմատիկա**

Նկարագրել բնական, արհեստական նյութերը՝ նմանեցնելով երկրաչափական պատկերներին (քառակուսի, շրջան, եռանկյուն, բազմանկյուն և այլն):

- **Կերպարվեստ**

Մեկնաբանել դասանյութում առկա կերպարվեստային հնարքները:

- **Ֆիզկուլտուրա**

Դասի ընթացքում կազմակերպել ֆիզկուլտ դադար, կատարել մատների, իրանի վարժություններ:

- **Ես և շրջակա աշխարհը**

Բնական ու արհեստական նյութերից պատրաստված նմուշները զուգորդել, համեմատել, մտովի տեղափոխել շրջակա աշխարհի (կենդանիներ, թռչուններ):

- **Թատրոն**

Պատրաստած նմուշներով բեմադրումներ անել:

ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ներկայացնում ենք երկրորդ դասարանի դասագրքում ներառված դասերի ժամանակացույցը ըստ բաժինների: «Նյութերի մշակման տեխնոլոգիա», «Ձեռնարկատիրություն» և «Դեկորատիվ կիրառական արվեստ» ծրագրային բաժինները ներկայացված են ապիկացիայի և խճանկարի տեխնիկայի առաջադրանքներում, իսկ «Կենցաղ և ընտանիք», «Առողջ սնունդ, սննդի պատրաստում» բաժիններին հատկացված դասերը կազմակերպվում են զրույց-քննարկումներով դասագրքում տրված նկարների շուրջ: Դասագրքում դասերի հաջորդականությունը պարտադրող չէ, բայց ցանկալի է, քանի որ դասերը և թեմաները կառուցված են հասանելիության, մատչելիության սկզբունքով: Ծրագրով նախատեսված են ընտրովի դասաժամեր, երեխան կարող է ընտրել թեման ինքնուրույն կամ ուսուցչի նախընտրությամբ:

Դասեր	Թեմաների պլանավորում	Ժամ
Բաժին	Նյութեր և ռեսուրսներ	1 ժամ
1.	Զրույց՝ Դաս՝ «Ինչ գիտես դու արդեն»:	
Բաժին	Գործիքներ, միջոցներ և սարքավորումներ	4 ժամ
1.	Դաս՝ «Աշխատատեղի նախապատրաստում»:	
2.	Դաս՝ «Գծանշում»:	
3.	Դաս՝ «Կտրում»:	
4.	Դաս՝ «Սուսինձ»:	
Բաժին	«Նյութերի մշակման տեխնոլոգիա»	
Խճանկար	Թղթի պատուման և կտրման տեխնիկա	6 ժամ
1.	Դաս՝ «Տատիկի նկուղում»:	
2.	Դաս՝ «Պարուհիներ»:	
3.	Դաս՝ «Դեկորատիվ գրչաման»:	
4.	Դաս՝ «Ընձուղտներ»:	
5.	Դաս՝ «Ծաղիկները սարերում»:	
6.	Դաս՝ «Ոսկե ձկնիկ»:	

Ապիկացիա	Թղթի կտրման տեխնիկա	7 ժամ
1.	Դաս՝ «Նավակներ»:	
2.	Դաս՝ «Ռոբոտներ»:	
3.	Դաս՝ «Բազմագույն ցանկապատ»:	
4.	Դաս՝ «Դաշնակահար»:	
5.	Դաս՝ «Նապաստակներ»:	
6.	Դաս՝ «Լուսակիր»:	
7.	Դաս՝ «Անակնկալ բացիկ»:	
Օրիգամի	Թղթի ծալման և վերածալման տեխնիկա	4 ժամ
1.	Դաս՝ «Ուրախ ավտորուս»:	
2.	Դաս՝ «Թղթե բաժակներ»:	
3.	Դաս՝ «Թիթեռնիկների պարը»:	
4.	Դաս՝ «Դպրոցականի հագուստ»:	
Բաժին	Բնական և արհեստական նյութեր	3 ժամ
1.	Դաս՝ «Արագիլների վերադարձը»:	
2.	Դաս՝ «Ուրախ նոտաներ»:	
3.	Դաս՝ «Զարդարված եղևնին»:	
	Թղթի երկտակ ծալում	2 ժամ
1.	Դաս՝ «Թիթեռնիկների զբոսանքը»:	
2.	Դաս՝ «Տոնական բացիկ»:	

Բաժին	«Դիզայն և կիրառական արհեստներ» «Հնագիտական թանգարանում»:	3 ժամ
1.	Դաս՝ «Տիկնիկանախշ»:	
2.	Դաս՝ «Գոգնոցանախշ»:	
3.	Դաս՝ «Կարպետանախշ, զարդանախշ»:	
Բաժին	«Առողջ սնունդ, սննդի պատրաստում»	2 ժամ
1.	Դաս՝ «Սպասարկման ոլորտ»: Զրույց	
2.	Դաս՝ «Սնվելու հիգիենա»: Առողջ սնունդ»:	
Բաժին	«Ձեռնարկատիրություն»	3 ժամ
1. Խճանկար	Դաս՝ «Գրչաման»:	
2. Ապլիկացիա	Դաս՝ «Հավ մայրիկ»:	
3. Ապլիկացիա	Դաս՝ «Նոյն է իջել»:	
Բաժին	«Կենցաղ և ընտանիք»	1 ժամ
Զրույց	«Անձնական հիգիենա»:	
	Ընտրովի դասեր	

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Դասագրքում ներկայացված յուրաքանչյուր թեմա ենթադրում է նպատակ և վերջնարդյունք: Ստորև պարզաբանվում է դասերի պլանավորումը ծրագրի բովանդակությանը համապատասխան՝ ըստ նպատակի և վերջնարդյունքների: **Վերջնարդյունքում** երեխան արդեն կարողանում է **ճանաչել, իմանալ** նյութերը և դրանք **կիրառել** ըստ նշանակության, **համեմատել, զուգորդել, համադրել** պատրաստած նմուշները և մասնակցել **խմբային քննարկումների**:

ԴԱՍ	ԹԵՄԱՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ	
Նյութեր և ռեսուրսներ		
1.	Զրույց «Շրջապատող առարկաները և ռեսուրսները ինչ նյութերից են պատրաստված»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ գրուցել այն մասին, թե ինչ նյութերից են պատրաստված շրջապատող առարկաները, և ովքեր են դրանք պատրաստել, ➤ ծանոթացնել տարբեր նյութերից պատրաստված լավագույն աշխատանքներին, աշխատասեղանին, աշխատանքի համար անհրաժեշտ նյութերին և միջոցներին, դրանցից օգտվելու սանհտարահիգիենիկ կանոններին:
2.	Աշխատասեղան և աշխատանքային միջոցներ	Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ ճանաչի և տարբերակի աշխատանքային նյութերը և միջոցները՝ ըստ նշանակության, ➤ կարողանա ներկայացնել աշխատանքային սեղանին ներկայացվող պահանջները:

Գործիքներ, միջոցներ և սարքավորումներ		
3.	«Մատիտ»	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել մատիտի տեսակներին, հատկություններին, մատիտից անվտանգ օգտվելու ձևերին, ➤ սովորեցնել մատիտով և քանոնով գծանշման, ձևանմուշով եզրագծման ձևերը: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա մատիտի դերը և նշանակությունը, ➤ կարողանա գծանշել և եզրագծել պատկերներ, ➤ կարողանա աշխատել կոկիկ:
4.	«Մկրատ»	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել մկրատի տեսակներին և նշանակությանը, մկրատից անվտանգ օգտվելու ձևերին, ➤ սովորեցնել մկրատով կտրելու, կտրահանելու, կտրվածք անելու ձևերը: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա մկրատից անվտանգ օգտվելու ձևերը, ➤ կարողանա մկրատով կտրել, կտրահանել պատկերներ:

5.	«Սոսինձ»	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել սոսնձի տեսակներին, հատկություններին, սոսնձից կոկիկ օգտվելու ձևերին, ➤ սովորեցնել սոսնձանյութից և փորձաթղթից օգտվելու ձևերը: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա սոսնձանյութից և փորձաթղթից օգտվելու ձևերը, ➤ կարողանա կոկիկ սոսնձել:
Նյութերի մշակման տեխնիկա		
6.	<p>Խճանկար</p> <p>«Տատիկի նկուղում»</p>	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել թղթի պատռվող հատկություններին, ➤ սովորեցնել թղթի պատռման և պատառոտման ձևերը, ➤ սովորեցնել թղթի փոքրիկ մասնիկները սոսնձել եզրագծի՝ գծապատկերի ներսում: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թղթի պատռման և պատառոտման ձևերը, ➤ կարողանա աշխատել եզրագծով, գծապատկերով, սոսնձել կոկիկ, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա պատրաստել թղթե խճանկար:

7.	Խճանկար «Պարու- հիներ»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել թղթի պատուման և պատառոտման ձևերը, ➤ սովորեցնել թղթի փոքրիկ մասնիկները սոսնձել գծապատկերի ներսում, ➤ դրսևորել ստեղծագործական մոտեցումներ, օգտագործել տարբեր թղթեր: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա գծապատկերով աշխատելու ձևերը, ➤ կարողանա կիրառել դերային խաղերում, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա պատրաստել հարթ խճանկար:
8.	Խճանկար «Ընձուղտ»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել թղթի պատուման և պատառոտման ձևերը, ➤ սովորեցնել թղթի փոքրիկ մասնիկները գծապատկերի ներսում սոսնձելու ձևերը: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա գծապատկերով աշխատելու ձևերը, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա պատրաստել հարթ խճանկար:

<p>9.</p>	<p>Խճանկար</p> <p>«Ծաղիկները սարերում»</p>	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել թղթի ճմռթման ձևերը, ➤ սովորեցնել բազմագույն փոքրիկ ճմռթած թղթե մասնիկները սոսնձել գծապատկերի ներսում, ➤ ձևավորել ստեղծագործական մտածողություն: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թղթի ճմռթման ձևերը, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա պատրաստել ծավալային խճանկար:
<p>10.</p>	<p>Խճանկար</p> <p>«Ոսկե ձկնիկ»</p>	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել դակիչով համաչափ փոքր թղթիկներ ստանալու ձևերը, ➤ սովորեցնել բազմագույն փոքրիկ թղթե մասնիկները սոսնձել գծապատկերի ներսում, ➤ ձևավորել ստեղծագործական մտածողություն: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա (դակիչով) համաչափ փոքր թղթիկներ ստանալու ձևերը, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա ստանալ հարթ բազմագույն խճանկար:

Նյութերի մշակման տեխնիկան		
11.	Ապլիկացիա «Նավակ»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել թղթից տարբեր չափի եռանկյուններ կտրելու ձևերը, ➤ սովորեցնել ըստ գծապատկերի տարբեր չափի եռանկյուններ սոսնձել: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թղթից տարբեր չափի եռանկյուններ կտրելու, սոսնձելու, գծապատկերից օգտվելու հնարները, ➤ կարողանա պատրաստել բազմագույն, հարթ ապլիկացիա, նկարագրել հաջորդականությունը, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա պատրաստել հարթ ապլիկացիա:
12.	Ապլիկացիա «Ռոբոտներ»:	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել թղթից քառակուսի կտրելու ձևերը, ➤ սովորեցնել տարբեր չափի քառակուսիները սոսնձել ըստ գծապատկերի: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա տարբեր չափի քառակուսիները սոսնձելու և գծապատկերից օգտվելու ձևերը, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա պատրաստել միագույն հարթ ապլիկացիա:

<p>13.</p>	<p>Ապլիկացիա</p> <p>«Բազմագույն ցանկապատ»</p>	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել տարբեր չափի և ձևի բազմանկյուններ կտրելու ձևերը, ➤ սովորեցնել սոսնձել ըստ նկարի՝ նույն չափի բազմանկյուններ, ➤ սովորեցնել բազմագույն հարթ ապլիկացիայի մասնիկների սոսնձման հաջորդականությունը: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա և ճանաչի տարբեր չափի և ձևի բազմանկյուններ կտրելու, սոսնձելու հնարները: ➤ կարողանա պարզաբանել պատրաստման գործընթացը:
<p>14.</p>	<p>Ապլիկացիա</p> <p>«Դաշնակահար»</p>	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել թղթից ուղղանկյուններ կտրելու ձևերը, ➤ սովորեցնել սոսնձել ըստ գծապատկերի և տրված նմուշի: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա ուղղանկյուններ կտրելու, սոսնձելու և գծապատկերից օգտվելու հնարները, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա պատրաստել միագույն հարթ ապլիկացիա, ➤ կարողանա պարզաբանել միագույն հարթ ապլիկացիայի սոսնձման հաջորդականությունը:

15.	Ապլիկացիա «Նապաստակներ»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել թղթից տարբեր չափի ձվածն մասեր կտրահանելու ձևերը, ➤ սովորեցնել սոսնձել՝ ըստ գծապատկերի: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թղթից տարբեր չափի ձվածն մասեր կտրահանելու և սոսնձելու ձևերը՝ ըստ հաջորդականության, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա պատրաստել թեմատիկ հարթ ապլիկացիա և ներկայացնել:
16.	Ապլիկացիա «Լուսակիր»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ ամրապնդել ուղղանկյուն, եռանկյուն, շրջաններ գծանշելու և կտրելու կարողությունը, ➤ ամրապնդել ըստ տրված նկարի հաջորդականության մասնիկները սոսնձելու կարողությունը: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա բազմամասնիկ ապլիկացիայի սոսնձման հաջորդականությունը, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա պատրաստել թեմատիկ հարթ ապլիկացիա:

17.	Մոդուլային ապլիկացիա «Բացիկ անակնկալ»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել մեկ քառակուսուց հետաքրքիր բացիկ ստանալու հնարը, ➤ սովորեցնել ըստ տրված նկարի գծանշել, ծալել, հարթեցնել, կտրել, ետ ծալել և ստանալ բացիկ, ➤ սովորեցնել տրված լրացուցիչ մասնիկները կտրահանել և ձևավորել բնապատկերը, օգտագործել փորձաթուղթ: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա ծավալային բացիկ ստանալու ձևերը, ➤ կարողանա կարդալ տրված նկարը և կատարել գծանշման, կտրման, ծալման, հարթեցման գործողություններ, ➤ ներկայացնել կատարած աշխատանքը:
Նյութերի մշակման տեխնիկան		
18.	Օրիգամի «Ուրախ ավտուբուս»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել թղթի հատկություններին, ➤ սովորեցնել թղթի ծալման և հարթիչով հարթեցման ձևերը, ➤ սովորեցնել քառակուսի թղթից փիսիկ և շնիկ ստանալու հնարները: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թղթի ծալման և հարթեցման ձևերը, ➤ կարողանա պատրաստել նմուշներ և կիրառել խաղերում:

19.	Օրիգամի «Թղթե բաժակներ»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել թղթի ծալումները կատարել ըստ տրված նկարի հաջորդականության, ➤ սովորեցնել թղթի ծալման և հարթիչով հարթեցման ձևերը, ➤ սովորեցնել քառակուսի թղթից ծալումներով բաժակ պատրաստել, ➤ համեմատել թղթե և ապակե բաժակները: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ կարողանա թղթի ծալման և հարթեցման միջոցով բաժակ պատրաստել, ➤ կարողանա այն կիրառել:
20.	Օրիգամի «Թիթեռնիկների պարը»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ կարողանա ընտրել թուղթ՝ ծալումների համար, ➤ սովորեցնել ծալումները կատարել տրված նկարների հաջորդականությամբ, ➤ ամրապնդել ծալման և հարթիչով հարթեցնելու ձևերը, ➤ սովորեցնել քառակուսի թղթից ծալումներով թիթեռ պատրաստելու ձևերը: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թղթի ծալման և հարթեցման միջոցով թիթեռ պատրաստելու տեխնիկան, ➤ կարողանա դրսևորել ստեղծագործական մոտեցումներ, ➤ կարողանա պատրաստել տարբեր գույնի ու չափի թիթեռներ և կիրառել որևէ կոմպոզիցիայում:

21.	Օրիգամի «Դպրոցականի հագուստ»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել թղթի ծալման հատկություններին, ➤ սովորեցնել՝ քառակուսի թղթի ծալումների և հարթեցման միջոցով ստանալ վերնաշապիկ և շրջագգեստ, ➤ սովորեցնել օրիգամիի տեխնիկայով պատրաստել դպրոցականի հագուստ: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թղթի ծալման և հարթեցման ձևերը, ➤ կարողանա կարդալ գծապատկերները, նկարները և կատարել ծալումներ:
Նյութերի մշակման տեխնիկան բնական և արհեստական նյութերով		
22.	«Արագիլների վերադարձը»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել բնական նյութերի տեսակներին, ընտրությանը, հատկություններին և մշակման տեխնոլոգիային, ➤ սովորեցնել՝ բնական նյութերը ընտրել թեմային համապատասխան և նախապատրաստել աշխատանքին: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա տարբեր նյութերի մշակման և նախապատրաստման ձևերը, ➤ կարողանա կոլաժի համար հավաքել տարբեր նյութերով կոմպոզիցիա պլաստիլինե մակերեսի վրա:

23.	«Ուրախ նոտաներ»	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել բնական նյութերի տեսակներին՝ ճյուղեր, մասուր, սերմեր, կորիզներ, դրանց հատկություններին, ընտրությանը և մշակման տեխնոլոգիային, ➤ սովորեցնել՝ բնական նյութերը ընտրել թեմային համապատասխան և նախապատրաստել աշխատանքին: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա տարբեր նյութերի մշակման և նախապատրաստման ձևերը, ➤ կարողանա պատրաստել ծավալային ապլիկացիա տարբեր նյութերով:
24.	«Ջարդարված եղևնին»	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել բնական նյութերի տեսակներին, հատկություններին, ընտրությանը (եղևնու ճյուղեր, ուլունքներ, սերմեր, հատիկներ) և դրանց մշակման տեխնոլոգիային, ➤ սովորեցնել՝ ինչպես ընտրել բնական նյութերը և նախապատրաստել աշխատանքին: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա տարբեր նյութերի մշակման և նախապատրաստման ձևերը, ➤ կարողանա պատրաստել տարբեր նյութերով ծավալային ապլիկացիա:

**Թղթի երկտակ ծալման տեխնիկա
Երկտակ ծալում**

25.	«Թիթեռ-նիկների գրոսանքը»	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել թղթի համաչափ երկտակ ծալման, հարթեցման, եզրագծման, կտրահանման տեխնիկային, ➤ սովորեցնել ձևանմուշով եզրագծման, եզրագծվածը կտրահանելու ձևերը: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թղթի համաչափ երկտակ ծալման, հարթեցման, ձևանմուշով եզրագծման ձևերը, ➤ թղթի համաչափ երկտակ ծալման տեխնիկայով կարողանա պատրաստել թիթեռ և կիրառել խաղերում:
26.	«Տոնական բացիկ»	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել թղթի համաչափ երկտակ ծալման, հարթեցման, եզրագծման, կտրահանման տեխնիկային, ➤ սովորեցնել ձևանմուշով եզրագծման, հորիզոնական կտրվածքներ անելու, եղևնի ստանալու ձևերը: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թղթի համաչափ երկտակ ծալման, հարթեցման, ձևանմուշով եզրագծման ձևերը, ➤ կարողանա պատրաստել նմուշներ թղթի համաչափ երկտակ ծալման տեխնիկայով և կիրառել:

Դիզայն և կիրառական արվեստ «Հնագիտական թանգարանում»		
27.	Ապիկացիա «Տիկնիկանախալ»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել կտրել երկրաչափական պատկերներ ըստ գծանշվածի և սոսնձել ըստ նմուշօրինակի՝ ստանալով տիկնիկի պատկեր, ➤ օգտագործել փորձաթուղթ, ➤ սովորեցնել տարբեր չափի եռանկյուններով սոսնձելով պատկերել տիկնիկի գոգնոցի նախշը: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա ըստ նմուշօրինակի պատկերներ ստանալու ձևերը, ➤ կարողանա պատկերել դեկորատիվ նախշ:
28.	«Գոգնոցանախալ»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել կտրել երկրաչափական պատկերներ ըստ գծանշվածի և սոսնձել ըստ նմուշօրինակի՝ ստանալով գոգնոցանախալի պատկեր, ➤ օգտագործել փորձաթուղթ, ➤ սովորեցնել տարբեր չափի եռանկյուններով սոսնձելով պատկերել տիկնիկի գոգնոցի նախշը: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա ըստ նմուշօրինակի պատկերներ ստանալու ձևերը, ➤ կարողանա պատկերել դեկորատիվ նախշ, զարդանախալ:

29.	«Կարպետի նախշ» «Զարդանախշ»	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել կտրել երկրաչափական պատկերներ ըստ գծանշվածի և սոսնձել ըստ նմուշօրինակի՝ ստանալով կարպետի նախշի պատկեր, ➤ օգտագործել փորձաթուղթ, ➤ սովորեցնել տարբեր չափի եռանկյուններով սոսնձելով պատկերել կարպետի նախշը: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա ըստ նմուշօրինակի պատկերներ ստանալու ձևերը, ➤ կարողանա պատկերել դեկորատիվ նախշ, զարդանախշ:
Առողջ սնունդ, սննդի պատրաստում		
30.	«Սպասարկման ոլորտ»	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել խոհարարի, վաճառողի, հացթուխի, մատուցողի մասնագիտություններին, ➤ տալ գիտելիքներ սննդի հիգիենայի պահպանման, ժամկետանց սննդի մասին: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա սննդի ոլորտի մասնագիտությունները, ➤ իմանա սննդի հիգիենան, ➤ կարողանա տարբերել ժամկետանց սնունդը՝ ըստ մակնիշի:

31.	<p>«Սննդի հիգիենան»</p> <p>«Առողջ սնունդ»</p>	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել սեղանի շուրջը նստելու վարքի կանոններին: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա և կարողանա սննդից ճիշտ օգտվելու, սեղանի շուրջը նստելու վարքի կանոնները, կիրառի խաղերում, ➤ կարողանա պահպանել սանիտարա-հիգիենիկ կանոնները:
Կենցաղ և ընտանիք		
32.	«Անձնական հիգիենա»	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ ծանոթացնել դպրոցականի անձնական հիգիենայի պահպանման կանոններին, ➤ սովորեցնել՝ օրվա բոլոր պահերին տանը և դպրոցում պահպանել հիգիենայի նորմերը, <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա անձնական հիգիենայի պահպանման կանոնները, ➤ կարողանա պահպանել անձնական հիգիենայի նորմերը:

Ձեռնարկատիրություն

<p>33.</p>	<p>Խճանկար «Դեկորատիվ գրչաման»</p>	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել թղթի պատուման և պատառոտուման ձևերը, ➤ սովորեցնել թղթի փոքրիկ մասնիկները թղթե ժապավենի վրա կոկիկ սոսնձելու ձևերը, ➤ ծանոթացնել ծավալային մակերեսի վրա թղթե ժապավենը սոսնձելու հնարին: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա ծավալային մակերեսի վրա թղթե ժապավեն սոսնձելու հնարը, կիրառի, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա կիրառել:
<p>34.</p>	<p>Ապլիկացիա «Հավ մայրիկ»</p>	<p>Նպատակը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել գծանշել և կտրահանել ձվաձև պատկերներ, ➤ սովորեցնել սոսնձել ըստ տրված նկարի: <p>Վերջնարդյունքը՝</p> <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թղթից ձվաձև մասեր կտրահանելու ձևերը, ➤ կարողանա աշխատել կոկիկ, օգտագործել փորձաթուղթ, ➤ կարողանա պատրաստել թեմատիկ հարթ ապլիկացիա:

35.	Ապլիկացիա Թանգրամներ «Նոյն է իջել»	Նպատակը՝ <ul style="list-style-type: none"> ➤ սովորեցնել մեկ քառակուսուց կտրել երկրաչափական պատկերներ ըստ գծանշվածի և սոսնձել ըստ գծապատկերի կամ նմուշօրինակի, ➤ օգտագործել փորձաթուղթ, ➤ սովորեցնել թանգրամների միջոցով պատկերել հետաքրքիր խճապատկերներ: Վերջնարդյունքը՝ <ul style="list-style-type: none"> ➤ իմանա թանգրամներից պատկերների կառուցման ձևերը, ➤ կարողանա կառուցել թեմատիկ խճապատկեր:
Ընտրովի դասեր		

ԲԱԺԻՆ 2.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Ի՞նչ է մեթոդը

Մեթոդը հունարեն բառ է (metodos), որ բառացի թարգմանած նշանակում է ինչ-որ տեղ տանող ուղի, ճանապարհ:

Ուսուցչի և աշակերտի համագործակցությունը ուսումնական միջավայրում միտված է ուսումնական նպատակներն իրականացնելուն:

Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն սոսկ իմացությունը բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխող մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողությունը:

Մեթոդների ընտրության և կիրառության կարողությունն իր հերթին պայմանավորված է մի շարք գործոններով՝

- ուսուցիչը պետք է կարողանա կիրառել բազմազան մեթոդներ,
- սովորողը պետք է վստահ լինի, որ ուսուցիչը աջակցելու և օգնելու է,
- սովորողը պետք է հստակ իմանա՝ ի՞նչ է անում և ինչո՞ւ,
- սովորողը պետք է մշտապես տեղյակ լինի, թե ի՞նչ է իրենից ակնկալվում:

Այսպիսով՝ ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը:

Ուսուցման մեթոդներից են՝

- **Խոսքային մեթոդ** (բացատրում, պատմում, զրույց, հրահանգ, ցուցում),
- **Ջննական մեթոդ** (ցուցադրում, դիդակտիկ նյութերի օգտագործում),
- **Գործնական մեթոդ** (վարժությունների կատարում),
- **Համագործակցային ուսուցման (խմբային) մեթոդներ:**

Համագործակցային ուսուցման (խմբային) մեթոդներ

Իրականացվում է համագործակցային խմբերում: Աշակերտները պետք է հասկանան, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Նման խմբերին բնորոշ են թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնն անելու ցանկությունը, փոխկախվածությունն ու փոխկապվածությունը, սոցիալական փոխազդեցության հմտությունները, խմբի աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու ու վերանայելու կարողությունը: Ուսուցչի խնդիրն է՝ առաջադրանքները կառուցել այնպես, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան: Երկրորդ դասարանում ուսուցման մեթոդներից ավելի հաճախ կարելի է կիրառել հետևյալ մեթոդները՝

1. Մտազրոհ կամ մտքերի տարափ
2. Քառաբաժան
3. Շրջագայություն պատկերասրահում:

Պարզաբանենք.

1. Մտազրոհ կամ մտքերի տարափ

Մտազրոհը խմբի անդամների միջև մտքերի փոխանակման ընթացքում գաղափարների ստեղծման և հարստացման եղանակներից մեկն է: Մինչ դասանյութին անցնելը ուսուցիչը հարցադրման միջոցով որոշակի ժամանակում անհատական կամ զույգերով հնարավորություն է տալիս արտահայտելու իրենց

իմացած տեղեկությունը նոր հաղորդվելիք թեմայի վերաբերյալ: Ամեն միտք, թեկուզ անվստահ, խրախուսվում է: Այս մեթոդի սկզբունքային առանձնահատկությունն այն է, որ բացառվում է առաջադրված լուծումների մասին անել որևէ քննադատություն կամ տալ գնահատական: Յուրաքանչյուր մասնակից ազատ և անկաշկանդ արտահայտում է իր իմացածը, չի անհանգստանում սխալվելուց, անհավանական, անհեթեթ և հակասական գաղափարներ արտահայտելու մտավախություն չի ունենում, նա կարող է **նկարագրել, ցուցադրել, զուգորդել, համադրել, համեմատություններ անել, մեկնաբանել:**

Այդպիսի անկաշկանդ մթնոլորտի ստեղծումը նպաստում է ստեղծագործական մտածողության զարգացմանը:

2 . Քառաբաժան

Դասանյութի յուրացումը ստուգելու նպատակով ուսուցիչը առաջարկում է կազմել քառաբաժան՝ տետրի էջը խաչաձև բաժանելով 4 հավասար մասերի: Յուրաքանչյուր մասում ուսուցիչը գրում է որոշակի հարց և առաջարկում է պատասխանել: Պատասխանը կարող է լինել նաև նկարչություն, ապլիկացիա:

Օրինակ: Ցուցադրել գունավոր թղթե տնակներ և հարցնել.

<p>Ինչ տեսար (նկարագրություն)</p>	<p>Ինչ լսեցիր (համեմատություն)</p>
<p>Ինչ զգացիր (զուգորդում) Ինչպիսի՞ զգացողություն ունեցար նմուշը տեսնելուց հետո:</p>	<p>Նոր վերնագիր (ստեղծագործիր) Ուրիշ ինչպե՞ս կանվանեիր:</p>

3. Շրջագայություն պատկերասրահում

Ընդհանուր նկարագրություն

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակն է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Ընթացքը

- Ուսուցչի հրահանգով պատրաստի աշխատանքները փակցվում են սրահի պատին՝ ստեղծելով պատկերասրահ:
- Մասնակից երեխաները շրջում են պատկերասրահում՝ կանգ առնելով յուրաքանչյուր ցուցանմուշի մոտ: Նա, ով մասնակցել է այդ նմուշի ստեղծմանը, մանրամասն ներկայացնում է աշխատանքը, պատասխանում հարցերին և մասնակիցների առաջարկությունների համաձայն՝ կատարում լրացումներ կամ ուղղումներ: «Շրջագայությունն» ավարտվում է, երբ բոլորը ծանոթանում են բոլոր աշխատանքներին: Պատկերասրահում շրջագայությունից հետո աշխատանքները ևս մեկ անգամ ***համեմատում են, վերլուծում, զուգորդում, համադրում, մեկնաբանում, քննարկում:***

ԴԱՍ 1

Օրիգամի

Դասարան՝ Երկրորդ

Թեմա՝ «Ուրախ ավտուբուս»

Նպատակը, խնդիրները

- ❖ Հեքիաթի պատմումի միջոցով սովորեցնել պատրաստել օրիգամի տեխնիկայով շնիկ և փիսիկ:
- ❖ Նպաստել ձեռքի մանր մկանային համակարգի (մատների շարժունակության) զարգացմանը:

Վերջնարդյունքը.

- **իմանա** օրիգամիի պատրաստման հաջորդականությունը,
- **կարողանա** կարդալ գծապատկերը, ծալել,
- **ցուցադրի** ծալման և հարթեցման տեխնիկան,
- **համեմատի** շնիկի և փիսիկի պատրաստման հաջորդականությունը,
- **որոշի** շնիկի և փիսիկի արտաքին նմանությունը և տարբերությունը,
- **կիրառի** խաղերում,
- **քննարկի** խմբում,
- **կարողանա** համագործակցել խմբում:

Օգտ. նյութերը՝

- Ունենալ գունավոր թղթեր, մկրատ, մատիտներ,
- շնիկի և փիսիկի նմուշօրինակներ,

- Դասասենյակի տեսանելի տեղում ամրացնել մեծ ցուցապաստառ, որի վրա պատկերված է «Ուրախ ավտորուս» նկարը:

Խթանում - Ուսուցիչը պատմում է մի հետաքրքրաշարժ հեքիաթ «Ուրախ ավտորուսի» մասին: Պատմելու ընթացքում ցուցադրում է շնիկի և փիսիկի՝ օրիգամի տեխնիկայով պատրաստման ընթացքը:

Լինում է, չի լինում՝ մի բակ, որտեղ ապրում էին շնիկները և փիսիկները: Մի օր նրանք որոշեցին գնալ ճանապարհորդության «Ուրախ ավտորուսով»: Պատմելու ընթացքում բացատրել և ցուցադրել թղթի ծալման տեխնիկայով շնիկի և փիսիկի ստացման գործընթացը: Պատրաստելուց հետո սոսնձել համապատասխան տեղում:

(5-8 րոպե)

Ի/ընկալում

Ուսուցիչը բացատրում և հետևում է պատրաստման ընթացքին քայլ առ քայլ, անհրաժեշտության դեպքում միջամտում:

Հրահանգ



- Ծալել անկյունագծով քառակուսին, ստանալ 2 եռանկյուն, հարթեցնել:
 - Եռանկյունների աջ և ձախ անկյունները ծալել մի փոքր դեպի ներքև, հարթեցնել:
 - Ներքևի սուր անկյունները ծալել դեպի ներս, հարթեցնել:
 - Մատիտով նկարել աչքերը, քթիկը, բեղիկները:
 - Ստացվեց շնիկ:
- Ապա բացատրում է թղթից փիսիկի ստացման հաջորդականությունը:

(15-20 րոպե)

Կշռադպրում

Տալ հարցեր

- Քառակուսի թուղթը ինչպե՞ս ծալեցինք:
- Ինչպիսի՞ն են շնիկի ականջները:
- Նկարագրեք փիսիկի պատրաստման հաջորդականությունը:

Ուսուցիչը առաջարկում է երեխաներին իրենց պատրաստած շնիկները և փիսիկները սոսնձել ցուցապաստառի վրա և հորինել հեքիաթի ավարտը:

(5-10 րոպե)



Այն երեխաները, որոնք դժվարանում են աշխատել քառակուսի թղթով, նրանք կարող են աշխատել եռանկյունաձև թղթով: Ներկայացրած նյութի նպատակն է օգնել ուսուցիչներին ճիշտ կազմակերպել օրիգամիկ ուսուցման պարապմունքները՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները և հնարավորությունները:

ԴԱՍ 2.



Ապլիկացիա

Թեմա՝ «Ընձուղի»:

Նպատակը՝

- ❖ Ծանոթացնել թղթի պատուվող հատկություններին:
- ❖ Սովորեցնել պատահոտման ձևերը:
- ❖ Սովորեցնել կոկիկ սոսնձելու ձևերը:
- ❖ Զարգացնել պատահոտված թղթիկներից պատկեր ստանալու կարողությունը:
- ❖ Զարգացնել պատկերը ամբողջական տեսնելու և ընկալելու կարողությունը:
- ❖ Ընդլայնել պատկերացումները խճանկարի տեխնիկայի մասին:

Վերջնարդյունքները՝

- Թուղթը պատահոտի և կոկիկ սոսնձի եզրագծի ներսում:
- Պահպանի աշխատանքի կատարման հաջողականությունը:
- Տեսնի և ընկալի պատկերը ամբողջական:
- Կատարի լրացուցիչ ձևավորումները մատիտներով:
- Գնահատի գործողության արդյունքը:
- Հորինի հետաքրքիր պատմություն ընձուղտի մասին:

Ուսուցանող.

- Շարունակել սովորեցնել լսել և կատարել հրահանգները, ցուցումները:
- Շարունակել սովորեցնել թուղթը կոկիկ սոսնձելու տեխնիկան:

Համագործակցային կարողություններ և հմտություններ

- Համագործակցել ընկերոջ հետ առաջադրանքի լուծման հարցերում:
- Աշխատել խմբում:

Ուսուցման մեթոդները՝

Խոսքային՝ բացատրություն, ցուցադրում, ցուցումներ, հրահանգներ, խմբային քննարկումներ, գործնական աշխատանք, մտազրոհ, շրջագայություն ցուցասրահում, գործնական աշխատանք:

Ուսուցման միջոցները՝

Նկարներ, սահիկներ, պաստառներ, աշխատանքային ավբոմ, սոսինձ, մկրատ, ձևանմուշներ, գունավոր թղթեր, մատիտներ:

Միջառարկայական կապը՝

Մայրենի, կերպարվեստ, շրջակա աշխարհ, մաթեմատիկա:

ԽԹԱՆՈՒՄ

Ուսուցչի գործողությունները

(5-8 րոպե)

Մտազրոհի միջոցով վեր հանել երեխաների ունեցած գիտելիքները կենդանիների մասին: Կարդալ ընձուղտի մասին: Ներկայացնել և նկարագրել խճանկարի տեխնիկան, ուշադրությունը

հրավիրել նմուշօրինակի վրա, բացատրել և ցուցադրել քայլաշարի կատարման հաջորդականությունը: Ցուցադրելուց հետո առաջարկել աշխատել:


ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Գործնական աշխատանք

(18-25 րոպե)

Հիշեցնել, որ իրենց սեղանին դրված գունավոր թուղթը պետք է պատառոտել մանր մասնիկների և կոկիկ սոսնձել: Երեխաների ուշադրությունը հրավիրել նմուշօրինակների վրա, տալ համապատասխան բացատրություններ, ցուցումներ:

Աշխատանքի ընթացքում հարկավոր է օգնել դժվարացողներին:



Խորհուրդ ուսուցչին.

Ինքնուրույն աշխատանք հանձնարարելը հնարավորություն է տալիս կողմնորոշվել թղթի մակերեսի, չափի և ծավալի ընտրության, ինքնուրույն որոշումներ կայացնելու հարցում: Ընթացքում մոտենալ, ուղղորդել, խրախուսել, ոգևորել, հրահանգել, տալ համապատասխան ցուցումներ, անհրաժեշտության դեպքում օգնել, առաջարկել այլընտրանքային տարբերակներ՝ պահպանելով քայլաշարի հաջորդականությունը: Եթե դասարանում կան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, նրանք մշտապես պետք է լինեն ուշադրության կենտրոնում և աշխատեն համագործակցային խմբում:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ

(5-10 րոպե)

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ

«Շրջայց պատկերասրահում»:

Դասի ավարտին կազմակերպել աշխատանքների ցուցադրում, դիտել ու քննարկել ցուցադրված աշխատանքները: Քննարկման ժամանակ բոլորի ուշադրությունը հրավիրել աշխատանքների վրա, համեմատել, գտնել նմանությունները և տարբերությունները:

Անդրադարձ և ամփոփում հարցերով՝

- Ինչ պատրաստեցինք:
- Ինչ հաջորդականությամբ պատրաստեցինք:
- Ինչնու են տարբեր ձեր աշխատանքները:
- Ո՞ր աշխատանքն եք հավանում և ինչնու:
- Ինչ հետաքրքիր բան իմացաք պարապմունքի ընթացքում:

Գնահատում

Ինքնագնահատում, ընկերոջ գնահատում, ուսուցչի գնահատում

- Բոլոր երեխաներին խրախուսել և յուրաքանչյուրի աշխատանքի մեջ ընդգծել մի քանի դրական բնութագրիչներ:

Ընդլայնում

- Դիտել աշխատանքները և կազմել փոքրիկ նկարագրական պատմություն:
- Ընթերցել թեմային առնչվող մանկական ստեղծագործություն՝ ոտանավորներ, պատմություններ, հանելուկներ:

ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ, ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ

Երեխաների խոսքը և մտածողությունը վերլուծելու, ճշտելու, բացատրելու, համեմատություններ անելու կարողությունները զարգացնելու նպատակով անհրաժեշտ է դասավանդման գործընթացում բանավոր խոսքի մեջ կիրառել ասացվածքներ, հանելուկներ, ոտանավորներ: Դրանց կիրառումը կնպաստի ոչ միայն բառապաշարի հարստացմանը, այլև բանավոր խոսքը կկառուցի հետաքրքիր, գեղեցիկ և բարեհունչ:

ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

- Ով չի աշխատում, նա չի սխալվում:
- Ով աշխատի, նա կուտի:
- 7 անգամ չափիր, մեկ անգամ կտրիր:
- Ջուրը չտեսած՝ չեն բոբիկանա:
- Ինչ ցանես, այն կինձես:
- Ծիծաղում է նա, ով վերջում է ծիծաղում:
- Փեշակը ոսկե բիլազուկ է:
- Արհեստ ունեցողը մինչև կեսօր սոված կմնա:
- Մի խելքը լավ է, երկուսը՝ ավելի:
- Շատ աշխատողին՝ շալե շապիկ:
- Մի՛ ասա՝ չեմ կարող, ասա՝ չեմ ուզում:
- Խոսքը գործի կեսն է:
- Խոսքը քամուն մի՛ տուր:
- Խոսքը կտուրը մի՛ գցիր:

ՈՏԱՆԱՎՈՐՆԵՐ

Աշնանային տերևները

Աշուն է, աշուն,
Գույնզգույն աշուն:
Քամին թափում է
Տերևն այս սիրուն:

Բնապատկեր

Բնությունն ես իմ հարազատ:
Գետեր, ձորեր, ջրեր շատ-շատ:
Ահա ես էլ ծառ եմ տնկում:
Իսկ երբ հոգնում, հովին նստում:

Գարնանային բնապատկեր

Ապա եկեք մենք դուրս նայենք:
Բնությունն է արթնացել:
Գետակներն են մեր վարարել,
Իսկ ծառերը՝ կանաչել:

Արագիլ

Ճանապարհից երկար-երկար,
Դու, արագիլ, վերադարձար, մեզ մոտ եկար:
Բույնդ շինիր դու մեր ծառի բարձր ճյուղին:
Դե ինչ, մեզ մոտ մնա ամբողջ տարին:



ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայտորոշիչ գնահատումը ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտելու աշակերտի՝ ծրագրային նյութի յուրացման աստիճանը, բացթողումները, որը և կօգնի առաջիկայում կատարել անհրաժեշտ շտկումներ գիտելիքի և գործնական առաջադրանքների կարողությունների զարգացման ուղղությամբ: Հայտորոշիչ գնահատման ձևը պետք է ընտրի ուսուցիչը:

Հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի սովորողի գիտելիքները և կարողությունները գնահատվում են բնութագրիչներով: Գիտելիքների և կարողությունների աճի ու զարգացման գնահատման համար կարելի է օգտագործել աղյուսակներ, սանդղակներ և ստուգաթերթի նմուշներ, հարցեր և այլ բնութագրիչներ:

Տարբերակ 1.

ԱՏՈՒԿԱԹԵՐԹ

Սովորողի ամփոփիչ բնութագրիչները

Ծրագրային պահանջները	★★★★	★★★★★	★★★★★
<p>1. Ճանաչի և իմանա աշխատանքային միջոցները, գործիքները:</p>	<p>Կարողանում է ուսուցչի օգնությամբ մասնակիորեն ճանաչել աշխատանքային միջոցները և գործիքները՝ ըստ նշանակության, և կիրառել:</p>	<p>Կարողանում է ճանաչել աշխատանքային միջոցները և գործիքները՝ ըստ նշանակության, և կիրառել:</p>	<p>Կարողանում է ճանաչել աշխատանքային միջոցները և գործիքները ըստ նշանակության և հմտորեն կիրառել, համագործակցել խմբում:</p>
<p>2. Ճանաչի նյութերի տեսակները, հատկությունները, իմանա օգտագործման բնագավառները:</p>	<p>Կարողանում է ճանաչել նյութը ըստ տեսակների, հատկությունների:</p>	<p>Կարողանում է ճանաչել նյութը ըստ տեսակների, հատկությունների, նշանակության, օգտագործման բնագավառների:</p>	<p>Կարողանում է ճանաչել նյութը ըստ տեսակների, հատկությունների, նշանակության, օգտագործման բնագավառների և կիրառել: Ճանաչել թղթի տեսակները ըստ անվանումների: Համագործակցել խմբում:</p>

<p>1. Աշխատանք թղթով ա/ թղթի ծախում, հարթեցում, կտրում, պատռում բ/ ապլիկացիա, խճանկար, օրհգամի</p>	<p>Կարողանում է ուսուցչի օգնությամբ կատարել թղթի ծալման, կտրման, պատռման գործո- ղություններ:</p> <p>Կարողանում է ուսուցչի օգնությամբ կատարել մասնիկ- ների հավաքման, ստանձման գործողու- թյուններ:</p>	<p>Կարողանում է ինքնուրույն կատարել թղթի ծալման, կտրման, հարթեցման, պատռման գործո- ղություններ:</p> <p>Կարողանում է ինքնուրույն կատարել մասնիկների հավաք- ման, ստանձման գործողություններ:</p>	<p>Կարողանում է հնտորեն և ինամքով կատարել թղթի կտրման, ծալման, հարթեցման, պատռման գործողություններ: Կարո- ղանում է համագործակցել խմբում:</p> <p>Կարողանում է հնտորեն կատարել հավաքման, ստանձման գործողութ- յուններ տարբեր չափի մասնիկներով, դրսևորել ստեղծագործական մոտե- ցումներ, համագործակցել խմբում:</p>
<p>2. Բնական և արհեստական նյութեր ա/ նյութի մշակման տեխնոլոգիան՝ ընտրում, մշակում:</p>	<p>Կարողանում է ուսուցչի օգնությամբ նյութը տեսակավորել, ընտրել ըստ նշանակության, նախապատրաստել աշխատանքի:</p>	<p>Կարողանում է նյութը ինքնուրույն տեսակավորել, ինամքով ընտրել ըստ նշանակության, նախապատրաստել աշխատանքի:</p>	<p>Կարողանում է նյութը հնտորեն ճիշտ և ինամքով տեսակավորել, ընտրել ըստ նշանակու- թյան, մշակել, նախապատ- րաստել աշխատանքի, համագործակցել խմբում:</p>

<p>բ/ նմուշների պատրաստում սունձման և ամրացման եղանակով:</p>	<p>Կարողանում է ուսուցչի օգնությամբ կատարել սունձման և ամրացման գործողություններ:</p>	<p>Կարողանում է ինքնուրույն ճիշտ կատարել սունձման և պլաստիլինի մակերեսին ամրացման գործողություններ:</p>	<p>Կարողանում է հմտորեն կատարել սունձման և ամրացման գործողություններ, դրսևորել ստեղծագործական մոտեցում, համագործակցել խմբում:</p>
<p>3. «Կենցաղ և ընտանիք», «Առողջ սնունդ»: ա/ ինքնասպասարկում բ/անձնական հիգիենա:</p>	<p>Կարողանում է մեծերի օգնությամբ կատարել ինքնասպասարկման աշխատանքներ տանը, հասարակական վայրում, օգտվել կենցաղային սարքերից:</p>	<p>Կարողանում է ճիշտ կատարել ինքնասպասարկման աշխատանքներ տանը, հասարակական վայրում, օգտվել կենցաղային սարքերից:</p>	<p>Կարողանում է հմտորեն կատարել ինքնասպասարկման աշխատանքներ տանը, հասարակական վայրում, օգտվել կենցաղային սարքերից, համագործակցել խմբում:</p>

Լրացուցիչ նյութեր

Գիտե՞ք, որ

Այս մկրատը, որն ունի 4 օղակ, նախատեսված է այն երեխաների համար, որոնք նոր են սկսում թուղթ կտրել: Լրա ցուցիչ 2 օղակի միջոցով ուսուցիչը միա ժամանակ օգնում է երեխային թուղթը կտրել վստահ:



Գիտե՞ք, որ

ԶՐՈՒՅՑ. ԹՂԹԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս հազարամյակներ առաջ մարդիկ գրելու համար փնտրել են համապատասխան նյութ: Նրանք գրել են **քարի** (սեպագիր, Արգիշտիի ժամանակաշրջանի վկայություն), **մագաղաթի** (կենդանիների կաշվի), **պապիրուսների** (եղեգների), ծառի կեղևների վրա: Սակայն այդ նյութերի վրա անհարմար էր գրելը, դրա համար մարդիկ մշտապես որոնումների մեջ էին:



Իր ժամանակներում քիչ հարմար էր պապիրուսը, որը համարվում էր թղթի «պապիկը»: Պապիրուս բույսը աճում է ճահճուտ տեղերում: Եգիպտոսի Նեղոս գետի ափերին աճող պապիրուսը համարվել է հիմնական նյութի հայրենիքը:

Պապիրուսի ցողունը կտրում են երկարության ուղղությամբ մեջտեղից, ստանում գուլակներ, ապա շարում շերտերով (խաչ-խաչ) միմյանց վրա, պատում սոսնձանյութով, հարթեցնում մեծ և ծանր հարթիչ գլորաններով: Այնուհետև չորացնում էին արևի տակ և փաթաթում գլորելով: Արդյունքում ստանում էին գրելու համար պիտանի մակերես, որը անվանում էին պապիրուս կամ «бумага»:



Պապիրուսը համարվում է թղթի «նախահայրը»: Տարբեր ազգերի մոտ ուներ տարբեր անվանումներ.

Գերմանիայում - папир

Անգլիայում - пейпер

Իսպանիայում - папель

Ռուսաստանում - бумага

Իտալիայում - бамбаджо (որ նշանակում է բամբակ):

Թղթի հայտնագործման պատմությունից հայտնի չէ, թե երբ է այն ստեղծվել: Կան բազմաթիվ լեգենդներ թղթի ստացման գյուտի մասին:


Պերգամե (Pergame) քաղաքում վերանշակել էին նյութ, որը և կոչվեց քաղաքի անունով, այն ավելի հարթ էր և հարմար, գույն չէր անցկացնում, հետևաբար՝ թանաքով հնարավոր էր գրել երկու կողմի վրա էլ: Պերգամենտի համար որպես նյութ օգտագործել են ոչխարի և կովի կաշիները դեռևս Ք.ծ.ա. 2-րդ դարում: Երկար ժամանակ կաշվե կազմերը (պերգամենտը) օգտագործել



են, և դրանցում պահպանվել և մեզ են հասել ձեռագիր աշխատություններ: Անցան շատ ժամանակներ, և գրելու անհրաժեշտությունը մեծացավ:

Գրեթե նույն տեխնոլոգիայով թուղթ ստացան Կորեայում 4-րդ դարում, Ճապոնիայում 7-րդ դարում (ճապոնական թուղթը ավելի լավ որակ ուներ, նրանք ստացան թղթի 300 տեսակ): Թղթի գյուտը հասավ Եվրոպա միջնադարում, 8-րդ դարում Բաղդատում, 18-րդ դարում Վինեցիայում, 17-րդ դարում Գերմանիայում ստեղծվեցին թղթի համար աղացներ, սակայն դրանք դանդաղ էին աշխատում և չէին բավարարում:

17-18-րդ դարերում Հոլանդիայում, Ֆրանսիայում թղթի արտահանության համար որպես հումք օգտագործում էին փայտանյութը: Ջուլիակի որդի Ֆ. Կիլերը նկատել էր, որ մեղվի բույնը շատ նման է թղթի հյուսվածքին: Նա իր անձնական դիտարկումներով տեսել է, որ միջատները դա անում են փայտի մանր կտորներից: Այն մասին, թե ինչպես են ստանում թուղթը, այնուամենայնիվ, Ֆ. Կիլերը մշուշոտ պատկերագրում ուներ, և նա որոշեց՝ ինչպես որ պետք է՝



Եփել փայտը: Փայտը մանր կտրատեց, ջուրը վրան լցրեց և սկսեց եփել: Փայտը համառորեն ոչ մի կերպ չէր ուզում «եփվել»: Ջուլիակի որդին կրակը ուժեղացրեց, ջուրը եռաց՝ օղակներ առաջացնելով սկսեց դուրս ցայտել այնքան բարձր, որ թափվեց սեղանի սփռոցի վրա:

Երբ գործվածքը ներծծեց ջուրը, սփռոցի վրա մնաց հաստ, պինդ բլիթ: Եվ հենց այդ պահին էլ Կիլերը հասկացավ, որ հայտնագործության ճիշտ ճանապարհին է: Նա աղացում փայտը աղաց, խառնեց գործվածքի կտորների հետ և ստացավ լրագրի թուղթը, այն թուղթը, որի համար այդքան որոնումներ էր կատարել:

Գրեթե նույն ժամանակաշրջանում փայտանյութից, բույսերից,

քիմիական ճանապարհով սկսեցին ստանալ ցելյուլոզա (целлюлоза), որից մինչև այսօր ստանում են թուղթ:

Թուղթը նվաճեց Եվրոպայի 16-րդ դարում:

Մոսկվայից 30 կմ հեռու բացվեցին թղթի աղացներ, սակայն պահանջարկը մեծ էր, և դրանք չէին բավարարում: 18-րդ դարում Պյոտր 1-ինը տվեց հրաման՝ ստեղծելու թղթի մշակման մի քանի ֆաբրիկա:

Հեղափոխությունից հետո զարգացավ թղթի արտադրությունը, սկսեցին հասել ծառեր՝ դրանք մշակելով (գերաններ, տախտակներ, փայտի մանր կտորներ), լցնելով մեծ և հզոր 60 տոննա քարե թմբուկի մեջ՝ ստանում էին փայտանյութ, այն տեղափոխում ուրիշ ֆաբրիկա՝ ցելյուլոզայի ստացման համար: Այսպես ավարտվում է 1-ին փուլը, որը կոչվում է մեխանիկական մշակում:

2-րդ փուլում փայտանյութին ավելացնում են սոդա, տարբեր նյութեր, որոնք թղթին տալիս են ամրություն, հարթ տեսք, տպագրվելու հատկություն:

Օրինակ՝ սունձանյութը թղթին տալիս է ամրություն, անանցանելիություն, տպագրվելու հատկություն, բարձրացնում է դիմադրողականությունը:


3-րդ փուլում թղթե գանգվածը խառնվում է ջրի հետ՝ մշակվելով, և 750 մ/վրկ. արագությամբ չորանում, փաթեթավորվում ու դառնում է թուղթ:

4-րդ փուլում թուղթը ստանում է ապրանքային տեսք:

Այսօր արդեն ստեղծվել են խոշոր չափերի թղթի արտադրության համար հզոր ֆաբրիկաներ, 1 օրվա ընթացքում արտադրվում է 600 տոննա թուղթ:

Ներկայում հայտնի են 600 տեսակի թուղթ և սովարաթուղթ, որոնցից պատրաստում են 60000 նմուշներ, դրանք կարող են լինել ոչ միայն գրքեր, թերթեր, այլև պարկեր, քուղեր, խաղալիքներ, հագուստ, սպիտակեղեն:

21-րդ դարում թուղթն ունի անկանխատեսելի հնարավորություններ, հրաշագործ հատկություններ՝ քարից ամուր է, աղյուսից պինդ, չի այրվում, ջրում չի սուզվում:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցի «Տեխնոլոգիա» առարկայի ծրագիր, չափորոշիչ, 2022թ.:

Ավետիսյան Ժ., «Տեխնոլոգիա 1-4», Մեթոդական ձեռնարկ, Երևան, «Զանգակ», 2009թ.:

Ավետիսյան Ժ., «Աշխատանքային ալբոմ 2-րդ դասարանի համար, 1-ին կիսամյակ», Երևան, «Զանգակ», 2009թ.:

Ավետիսյան Ժ., «Աշխատանքային ալբոմ 2-րդ դասարանի համար, 2-րդ կիսամյակ», Երևան, «Զանգակ», 2009թ.:

Ավետիսյան Ժ., «Աշխատանքային ալբոմ 1-ին դասարանի համար», ԿԱԻ, 2006թ.:

Ավետիսյան Ժ., «Թղթով և ստվարաթղթով աշխատանքների կազմակերպումը տարրական դասարաններում», Երևան, ԿԱԻ, «Նախաշավիղ», 2007թ.:

Ավետիսյան Ժ., «Թղթով և ստվարաթղթով աշխատանքների կազմակերպումը տարրական դասարաններում», Երևան, ԿԱԻ, «Նախաշավիղ», 2007թ.:

Ավետիսյան Ժ., «Ֆիզկուլտ դադարների կազմակերպումը» Երևան, ԿԱԻ, «Նախաշավիղ», 2001թ.:

Ավետիսյան Ժ., «Օրիգամիները և մոտորիկայի զարգացումը», Երևան, ԿԱԻ, «Նախաշավիղ», 2008թ.:

Հովսեփյան Ս. և ուրիշներ, «Ուսուցչի ձեռնարկ I-IV դասարանների համար», Երևան, «Տիգրան Մեծ», 2019թ.:

Հովսեփյան Ս. և ուրիշներ, «Տեխնոլոգիա», 2-րդ դասարանի դասագրիք, Երևան, «Տիգրան Մեծ», 2019թ.:

Վարդումյան Ս., «Մատիկների վարժանք», Երևան, «Զանգակ», 2002 թ.:

М. А. Гусакова, «Аппликация» изд., Просвещение 1997 г.

Неменская Л. А., «Искусство и ти», Просвещение 2002 г.

Конишева Н. М., «Технология» 1 класс, «Умелые руки» изд. Ассоциация карин, 2003г.

Татьяна Сержантова, «Оригами 365 моделей», «Айрис пресс рольф», Москва, 2000 г.

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ 2

Մեթոդական ուղեցույց

Խմբագիր՝ Գալյա Հովհաննիսյան-Կիրակոսյան

EDIT PRINT
43 D. Malyan str, Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



ԷԴԻՑ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

